

## ՀՈՒՇԱԳԻՐ

### ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԷՐԵՔՈՒՆԻ ՎԱՐՉԱՎԱՆ ՇՐՋԱՆԻ ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքը և Երևանի Էրեբունի վարչական շրջանը, այսուհետ՝ Կողմեր,

Նպատակ ունենալով կազմակերպել օրինակելի փորձի փոխանակում, փոխայցելություններ, ընդհանուր նշանակության խնդիրների քննարկումներ, ինչպես նաև համագործակցել տեղական ինքնակառավարման, կրթության, մշակույթի, սպորտի, զբոսաշրջության բնագավառներում, ելնելով կայունության և փոխշահավետության սկզբունքներից՝ կազմեցին սույն Հուշագիրը ներքոհիշյալի մասին.

#### Հոդված 1

Կողմերն իրավահավասարության և փոխշահավետության հիման վրա համաձայնեցին աջակցել ու խրախուսել համապատասխան հիմնարկների և կազմակերպությունների միջև փորձի փոխանակմանը և համագործակցությունը տեղական ինքնակառավարման, կրթության, մշակույթի, սպորտի, զբոսաշրջության բնագավառներում:

#### Հոդված 2

Կողմերը համաձայնեցին կրթության բնագավառում փոխանակումներ և համագործակցություն իրականացնել հետևյալ միջոցներով.

❖ խրախուսել ուսումնական հաստատությունների միջև ուղիղ կապերի հաստատումը, ինչպես նաև միջնակարգ և ավագ դպրոցների համագործակցությունը.

❖ նախադպրոցական կրթության բնագավառում փորձի փոխանակման նպատակով կազմակերպել փոխայցելություններ:

#### Հոդված 3

Կողմերը համաձայնեցին մշակույթի և արվեստի բնագավառներում համագործակցություն իրականացնել հետևյալ ձևերով.

❖ ցուցահանդեսների կազմակերպում, մշակութային օրերի փոխադարձ կազմակերպում:

**Հոդված 4**

Կողմերը համաձայնեցին երիտասարդության ոլորտում համագործակցության զարգացմանը՝ երիտասարդական կազմակերպությունների միջև ուղիղ կապերի հաստատման, համատեղ ծրագրերի մշակման ու իրականացման միջոցով:

**Հոդված 5**

Կողմերը համաձայնեցին մարզական կազմակերպությունների միջև կապերի զարգացմանն ու ամրապնդմանը՝ սպորտային առաջնությունների կազմակերպման միջոցով:

**Հոդված 6**

Կողմերը կիրախուսեն և կնպաստեն զբոսաշրջային կապերի ամրապնդմանը: Կկազմակերպվեն էկոտուրեր, ամառային ճամբարներ, ցուցահանդես-տոնավաճառներ:

**Հոդված 7**

Կողմերը կմշակեն կոնկրետ ծրագրեր սույն Հուշագիրն իրագործելու համար:

**Հոդված 8**

Համագործակցությունը ծավալվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում, Կողմերի իրավասության սահմաններում:

**Հոդված 9**

Սույն Հուշագիրը կազմված է երկու հավասարազոր օրինակից և պահվում է կողմերի մոտ՝ մեկական օրինակ:

**Հոդված 10**

Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում Հուշագիրը ստորագրելու պահից և կգործի այնքան ժամանակ, քանի դեռ Կողմերից մեկը վեց ամիս առաջ չի տեղեկացրել մյուս Կողմին Հուշագրի կատարումը դադարեցնելու իր մտադրության մասին:

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ՄԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  
Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ



ԵՐԵՎԱՆԻ ԷՐԵՔՈՒՆԻ ԿՈՄՍՈՎԱՆ  
ՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐ  
Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

